ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորական ուղերձը Քաղաքացու օրվա առթիվ

29.04.2023

Սիրելի՛ արմավիրցիներ,
Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Քաղաքացու օրվա առթիվ:

Ոչ միայն պատիվ է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի, այլև պարտավորեցնող է:

Մեր նախնիներից ժառանգել ենք սրբազան երկիր, որն իր կայացման ճանապարհին բազմաթիվ մարտահրավերներ է հաղթահարել և այսօր էլ շարունակում է պատվով հաղթահարել:

Մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ հայ քաղաքացին ունի արժանապատվություն, տոկունություն, արարելու շնորհ, ջանասիրություն, պատվախնդրություն, դժվարության առջև չխոնարհվելու մեծ կամք:

Այսօր էլ հստակ գիտեկցելով այս օրվա խորհուրդը՝ համերաշխությունն ու միասնականությունը, պետք է առաջ շարժվենք՝ արժանապատիվ և բարեկեցիկ երկիր կառուցելու ճանապարհով, որտեղ յուրաքանչյուրս՝ զինվոր, մանկավարժ, բժիշկ, շինարար, գիտնական, հողագործ, վաճառական, արվեստագետ թե քաղաքական գործիչ, մեր ուրույն դերակատարությունը պետք է ունենանք:

Եվ մեր բոլոր նախաձեռնություններում և կյանքի կոչված գաղափարների իրականացման ճանապարհին կհաջողենք միայն այն դեպքում, երբ միասնական ջանքերով, հանուն պետության առաջընթացի աշխատենք և առաջ շարժվենք՝ չընկճվելով մեր առջև ծառացած դժվարություններից:

Օր օրի ուժեղանալու գիտակցումը չկորցնելով՝ պետք է ընդունենք, յուրաքանչյուրս մեր պետության հզորության գրավականն է:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Հայաստանի Հանրապետության Քաղաքացու օրվա առթիվ՝ մաղթելով առողջ, բարեկեցիկ, խաղաղ և արժանապատիվ կյանք: